

ԿԱՆՈՆԱԳԻՐ
ԹԷԳԷՇԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ՄԻՈՒԹԵԱՆ

1989
ՊՈՍԹՈՆ

ՅՕԴՈՒԱԾ Ա.
ՆՊԱՏԱԿ

- 1.- Պահպանել հայ ժողովուրդի մշակութային ժառանգը:
- 2.- Հաստատել վարժարաններ և կամ օժանդակել անոնց և կրթական հաստատություններու, ուր կ'ուսուցանուին հայ լեզուն, պատմութիւնը, կրօնը, գրականութիւնը, արուեստներն ու գիտութիւնը:
- 3.- Պատրաստել ազգային գործիչներ և օժանդակել ուսանողներու, որոնք կը նուիրուին հայագիտութեան կամ կը դառնան սպասաւորներ Հայաստանեայց Եկեղեցւոյ:
- 4.- Օժանդակել բարոյապէս և ի հարկին նիւթապէս հայ գրողներու, ուսուցիչներու, հոգևորականներու և մշակոյթի գործիչներու՝ ֆաջալերելով հայ մշակոյթի ծիրին մէջ անոնց աշխատանքը:
- 5.- Կազմակերպել գրական, գեղարուեստական ու գիտական ձեռնարկներ՝ սատարելու հայ մշակոյթի յառաջընթացին:
- 6.- Կազմակերպել երիտասարդական ու պատանեկան գործունէութիւններ՝ անոնց մէջ արթնցնելու համար հետաքրքրութիւն ու սէր հանդէպ հայ մշակոյթի, ինչպէս նաև գիտակցութիւն՝ հանդէպ ընկերային ու ֆաղափարական պարտաւորութիւններու: Այս ծրագրին իրագործման համար հայթայթել հարկ եղած տեղն ու միջոցները:
- 7.- Հրատարակել գրական, գեղարուեստական և այլ մշակութային գործեր: Խրայուսել հայ մշակոյթի գործերու թարգմանութիւնն ու ծանօթացումը օտար լեզուներով:

8.- Գործակցիլ այլ կազմակերպութիւններու հետ, որոնց նպատակները կը համապատասխանեն Միութեան նպատակներուն:

9.- Կազմակերպել Միացեալ Նահանգներու և Գանատայի տարածքին թէ այլուր միջ-մասնաճիւղային մշակութային ձեռնարկներ՝ արուեստագէտներու և դասախօսներու անհատական թէ խմբային փոխադարձ այցելութիւններով:

10.- Մշակել Մայր Հայրենիքի հետ մշակութային յարաբերութիւններ՝ կազմակերպելով մշակոյթի գործիչներու խմբային թէ անհատական փոխադարձ այցելութիւններ:

ՅՕԴՈՒԱԾ Բ.
ՄԱՍՆԱԾԻՆՆԵՐ

1.- Մասնաճիւղ մը կը հաստատուի Կեդրոնական Վարչութեան կողմէ երբ Միութեան նպատակները բաժնող նուազագոյնը եօթ հայերու կողմէ գրաւոր խնդրանք ներկայացուի ջրջանէ մը, ուր գոյութիւն չունի Միութեան որևէ Մասնաճիւղ:

2.- Կեդրոնական Վարչութիւնը յարմար դատելու պարագային իրաւսու է նշանակելու նոր Մասնաճիւղի առաջին վարչութիւնը, պայմանաւ որ այդ վարչութիւնը իր գոյութեան առաջին տարուան ընթացքին գումարէ Ընդհանուր Անդամական Ժողով մը՝ ընտրովի վարչութիւն կազմելու նպատակով:

3.- Իւրաքանչիւր Մասնաճիւղ Կեդրոնական Վարչութեան պարտի վճարել տարետուրք մը, որուն գումարը կ'որոշէ հերթական Պատգամաւորական Ժողովը:

4.- Բոլոր ստացուած կամ գնուած շարժուն թէ անշարժ ստացուածքները պէտք է արձանագրուած ըլլան Կեդրո-

նական Վարչութեան անունին՝ բացի եթէ Կեդրոնական Վարչութիւնը այլապէս տնօրինած է գրաւոր կերպով:

5.- Մասնաճիւղերը միայն 2000 տուարի գումար մը կը պահեն իրենց մօտ, բացի եթէ ունին մասնաշատուկ ծրագիր մը, զոր վաւերացուցած է Կեդրոնական Վարչութիւնը: Յաւելուածական իւրաքանչիւր գումար կը փոխանցուի Կեդրոնական Վարչութեան՝ պահուելու համար յատուկ հաշիւի մը մէջ: Մասնաճիւղերը չեն կրնար հիմնադրամներ հաստատել: Բոլոր հիմնադրամները պէտք է փոխանցուին Կեդրոնական Վարչութեան՝ անմիջապէս որ ստացուին:

6.- Որևէ դրամատնային հաշիւ բանալի առաջ, որևէ Մասնաճիւղ պարտի ունենալ Կեդրոնական Վարչութեան հաւանութիւնը: Գրաւոր արտօնութիւն ստանալէ ետք, Մասնաճիւղը Կեդրոնական Վարչութեան պէտք է հայթայթէ հետևեալ տեղեկութիւնները՝ դրամատան անունը, հասցէն, հաշիւին թիւը, իրաւասու ստորագրողներու անունները և հաշիւին նպատակը: Տարեվերջին, բոլոր հաշիւներու դրամատնային հաշուեցոյցերու օրինակները պէտք է կցուին Մասնաճիւղին տարեկան նիւթական տեղեկագրին և ուղարկուին Կեդրոնական Վարչութեան:

7.- Մասնաճիւղ մը լուծուած կը համարուի երբ անոր անդամներուն թիւը նուազի պահանջուած նուազագոյն թիւէն (7) և կամ երբ Կեդրոնական Վարչութիւնը բացարձակ մեծամասնութեամբ այդպէս տնօրինէ:

ՅՕԴՈՒԱԾ Գ.
ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԻՒՆ

1.- 18 տարիքը բոլորած ունէ հայ անհատ, առանց սեռի կամ դաւանանքի խտրութեան, կրնայ անդամակցիլ Միութեան:

2.- 18 տարեկանէն վար ամէն հայ Միութեան կրնայ անդամակցիլ իբրև կրտսեր անդամ: Կրտսեր անդամ մը կը վայելէ կրտսերներու բաժնին կանոնագրով նախատեսուած բոլոր իրաւասութիւնները:

3.- Իւրաքանչիւր անդամ պարտի լեցնել և ստորագրել անդամակցութեան յատուկ դիմումագիրը: Մասնաճիւղի վարչութիւնը իր մեծամասնութեան որոշումով կը վաւերացնէ դիմումագիրը:

4.- Իւրաքանչիւր անդամ պարտի վճարել տարեկան նուազագոյն անդամակցութեան տուրք մը, որուն գումարը կ'որոշէ Մասնաճիւղին Ընդհանուր Անդամական Ժողովը: Մասնաճիւղին Ընդհանուր Անդամական Ժողովը նոյնպէս կ'որոշէ ուսանողներու, օժանդակ անդամներու, թոշակաւորներու և մասնաւոր պարագաներու համար տարբեր անդամատուրքեր: Այդ սակերը պէտք է վաւերացուին Կեդրոնական Վարչութեան:

5.- Մասնաճիւղի մը վարչութեան դիւանը իրաւասու է որոշ պարագաներու բացառիկ զեղչեր կատարելու անդամատուրքի վրայ և կամ ամբողջովին ջնջելու զայն՝ ըստ անդամին նիւթական վիճակին և կամ Միութեան բերած անոր բարոյական օժանդակութեան:

6.- Իւրաքանչիւր անհատ կրնայ անդամակցիլ միայն մէկ Մասնաճիւղի և ունենալ միայն մէկ քուէի իրաւունք, որ փոխանցելի չէ:

7.- Բնակութեան վայրի փոփոխութեան պարագային, անդամակցութիւնը ինքնաբերաբար կը փոխանցուի նոր բնակավայրի Մասնաճիւղին՝ եթէ գոյութիւն ունի, պայմանաւոր անդամը գրով տեղեկ պահէ երկու Մասնաճիւղերու վարչութիւնները:

Ժողովի ընթացքին ընտրելի թեկնածուներու երկ-
պատիկ ցանկեր վերոյիջեալ պաշտօններուն հա-
մար: Ընտրողական Յանձնախումբի անդամները
ևս կրնան թեկնածու ըլլալ: Ընտրողական Յանձ-
նախումբը անուանումները կը կատարէ մեծամաս-
նութեան ձայնով: Ընդհանուր Անդամական Ժողո-
վի ընթացքին ան Հաջուեֆնիչ Յանձնախումբին
հետ միասնաբար կը վարէ ընտրութիւնները:

գ. Կը ֆննէ Մասնաճիւղին և իր յանձնախումբե-
րուն անցնող շրջանի գործունէութեան նիւթական
ու բարոյական տեղեկագրերը, կը վաւերացնէ գա-
նոնք և օրինակները կը դրկէ Կեդրոնական Վարչ-
ութեան:

դ. Կ'որոշէ յաջորդ տարուան նախահաշիւը:

ե. Որոշումներ կ'անցնէ օրակարգի վրայ գտնուող
հարցերու շուրջ:

զ. Կ'որոշեգրէ բանաձևեր՝ ներկայացուելու Պատ-
գամաւորական Ժողովին:

8.- Անշարժ կալուածներ գնելու, վաճառելու կամ գրաւի
դնելու համար անհրաժեշտ է ներկայ իրաւասու անդամ-
ներու երկու երրորդին դրական ֆուէն:

9.- Յանձնախումբերու անդամներուն ընտրութիւնները
կը կատարուին գաղտնի ֆուէարկութեամբ, օրինական
նիստի ընթացքին, գործադրելով ֆուէներու առաւելու-
թեան եղանակը (փլուրալիթի վոթ): Ուրիշ որոշումներ
կարելի է առնել ձեռամբարձ ֆուէարկութեամբ՝ բացի ե-
թէ ներկայ ֆուէարկուներու մեծամասնութիւնը տարբեր
կերպ որոշէ:

10.- Բոլոր որոշումները և ընտրութիւններու արդիւնք-
ները ի գօրու կը դառնան Կեդրոնական Վարչութեան վա-
ւերացումէն ետք:

11.- Կատարուած ընտրութիւններուն կամ տրուած որո-
շումներուն օրինաւորութիւնը խնդրական նկատող ժողո-
վական մը պարտի յաջորդող եօթ օրերու ընթացքին իր
գրաւոր բողոքը ներկայացնել Մասնաճիւղի վարչութեան,
որ գայն անմիջապէս պէտք է յղէ Կեդրոնական Վարչու-
թեան:

ՅՕԴՈՒԱԾ Ե.
ՀԱԾՈՒԵԹՆՆԻՉ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

1.- Հաջուեֆնիչ Յանձնախումբը կը ֆննէ Մասնաճիւղի
վարչութեան հաշիւները տարեկան նուազագոյնը մէկ ան-
գամ, և իր ֆննութեան արդիւնքը կը ներկայացնէ Ընդ-
հանուր Անդամական Ժողովին: Զեղծումներու կամ այլ
անկանոնութեանց պարագային, ան պարտի իր ֆննութեան
արդիւնքը տեղեկագրել նաև ուղղակիօրէն Կեդրոնական
Վարչութեան:

ՅՕԴՈՒԱԾ Զ.
ՄԱՍՆԱՃԻՒԳԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

1.- Մասնաճիւղի վարչութիւնը կը բաղկանայ նուազագոյ-
նը հինգ և առաւելագոյնը տասնհինգ անդամներէ, որոնք
կ'ընտրուին Ընդհանուր Անդամական Ժողովէն երկու տա-
րուան համար: Ընթացաւարտ վարչութեան անդամները
վերընտրելի են:

2.- Առաջին տարին Մասնաճիւղի վարչութեան անդամնե-
րու թիւին կէսը կ'ընտրուի մէկ տարուան համար. իսկ մը-
նացեալը և յաջորդական տարիներուն ընտրուողները՝ եր-
կու տարուան համար:

8.- Տարեկան անդամատուրքը չվճարած անդամ մը կը կորսնցնէ ընտրողի և ընտրուողի իրաւունքը: Այդ իրաւունքը կը վերահաստատուի նախորդ տարուան անդամատուրքին վճարումով:

9.- Նոր անդամ մը ֆուէարկելու իրաւունք կ'ունենայ իր դիմումնագրին վաւերացումէն վեց ամիս ետք միայն. իսկ վարչական կամ պատգամաւոր ընտրուելու համար առնչուազն տարի մը անդամ պէտք է եղած ըլլայ ան:

10.- Ուէ անդամ որ կը գործէ այս Կանոնագրի տրամադրութիւններուն հակառակ, կը դադարեցուի իր անդամացութենէն Ընդհանուր Անդամական Ժողովի մեծամասնութեան ֆուէով: Այս որոշումը, գործադրուելէ առաջ, պէտք է վաւերացուի Կեդրոնական Վարչութենէն:

11.- Անդամի մը գրաւոր հրաժարականը ի զօրու կը դառնայ իր պատկանած Մասնաճիւղին վարչութեան կողմէ հրաժարագրին ընդունումէն ետք: Հրաժարած անդամի մը անդամատուրքերն ու կատարած նուիրատուութիւնները չեն վերադարձուիր իրեն:

ՅՕԴՈՒԱԾ Դ.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՆԴԱՄԱԿԱՆ ԺՈՂՈՎ

1.- Մասնաճիւղի մը Ընդհանուր Անդամական Ժողովը կը գումարուի տարին մէկ անգամ, Փետրուար ամսուան ընթացքին:

2.- Բացառիկ Ընդհանուր Անդամական Ժողովներ կարելի է գումարել մասնաւոր հարցի մը շուրջ Մասնաճիւղի անդամակցութեան որոշումը ունենալու համար: Բացառիկ Անդամական Ժողովը կը հրաւիրուի Մասնաճիւղի վարչութեան որոշումով և կամ 20 անդամներու (որ թիւը որ աւելի քան է) գրաւոր դիմումին վրայ:

3.- Մասնաճիւղի վարչութիւնը պարտի իւրաքանչիւր անդամի հասցուցած ըլլալ ժողովի հրաւիրագիրը Ընդհանուր Անդամական Ժողովի թուականէն առնուազն եօթ օր առաջ:

4.- Ընդհանուր Անդամական Ժողովի օրակարգը կը կազմուի Մասնաճիւղի վարչութեան կողմէ. օրակարգին վրայ հարցեր կարելի է աւելցնել ներկայ իրաւասու անդամներու մեծամասնութեան ֆուէով:

5.- Ընդհանուր Անդամական Ժողովը օրինաւոր կը նկատուի իրաւասու անդամներու մէկ երրորդին և կամ նուազագոյնը 20 իրաւասու անդամներու (որ մէկը որ աւելի քան է) ներկայութեամբ: Այլապէս՝ յաջորդող 30 օրերու ընթացքին անդամներուն կ'ուղղուի երկրորդ ժողովի հրաւեր մը և այդ ժողովը կը նկատուի օրինաւոր՝ անկախաբար ներկաներու թիւէն:

6.- Ընդհանուր Անդամական Ժողովը ներկայ ֆուէարկուներու մեծամասնութեամբ կ'ընտրէ ժողովի ատենապետ մը և ատենադպիր մը: Բացառիկ Ընդհանուր Անդամական Ժողովները կը վարեն Մասնաճիւղի վարչութեան ատենապետն ու ատենադպիրը:

7.- Ընդհանուր Անդամական Ժողովը՝

ա. Կ'ընտրէ ժողովի դիւանը:

բ. Կ'ընտրէ Մասնաճիւղի վարչութեան անդամները, 1 տարուան համար, ապա նաև Պատգ. Ժողովի պատգամաւորները, Հաշուեմանիչ Յանձնախումբի 3 անդամները, ինչպէս նաև Ընտրողական Յանձնախումբ մը՝ բաղկացած 3-5 անդամներէ, բոլորն ալ 1 տարուան պաշտօնավարութեան համար: Ընտրողական Յանձնախումբին պարտականութիւնն է պատրաստել յաջորդ տարուան Ընդհ. Անդամական

3.- Վարչութեան անդամի մը հրաժարման կամ մահուան պարագային, վարչութիւնը կը հրահարէ յաջորդ առաւելագոյն բուէ ստացողը՝ ստանձնելու թափուր մնացած վարչական պաշտօնը մինչև աւարտումը փոխարինեալ վարչականին պաշտօնավարութեան:

4.- Վարչութիւնը մէկ տարուան պաշտօնավարութեան մը համար իր մէջէն կ'ընտրէ ատենապետ մը, ատենադպիր մը և գանձապահ մը: Վարչութիւնը նոյնպէս կ'ընտրէ փոխ-ատենապետ մը, և օգնական ատենադպիր ու գանձապահ՝ առաջիններու բացակայութեան վարելու անոնց պաշտօնները:

5.- Կեդրոնական վարչութիւնը իրաւասու է հարկեցուցիչ պարագաներու տակ ունէ վարչական անդամ դադարեցնելու իր պաշտօնէն և նոյնիսկ լուծելու ամբողջ վարչութիւնը: Դադարեցուած վարչականը և լուծեալ վարչութեան մեծամասնութիւնը վերընտրելի չեն:

6.- Վարչութիւնը ժողով կը գումարէ առնուազն ամիսը անգամ մը: Բոլոր ատենագրութիւնները, նամակները և պաշտօնական գրութիւնները կը ստորագրուին ատենապետին և ատենադպրին կամ փոխ-ատենապետին և գանձապահին կողմէ:

7.- Վարչութիւնը՝

ա. Կը գործադրէ Կեդրոնական վարչութեան, ինչպէս նաև Ընդհանուր Անդամական Ժողովին որոշումներն ու թելադրութիւնները:

բ. Կը կազմէ Մասնաճիւղի անդամակցութենէն բաղկացած որևէ յանձնախումբ՝ յատուկ նպատակի մը համար և կը հսկէ անոր տնտեսական ու վարչական գործունէութեան, միշտ հետապնդելով Միութեան ընդհանուր նպատակները:

գ. Պաշտօնի կը կոչէ կամ պաշտօնէ կը դադարեցնէ կալուածի կամ Միութեան գործունէութեանց համար վճարովի պաշտօնեաներ ու կ'որոշէ անոնց կատարուելիք նիւթական յատկացումները՝ միշտ մնալով նախահաշիւի սահմաններուն մէջ: Վարչութեան անդամներու Ժառանգութիւնները կամաւոր են և ոչ-վճարելի:

դ. Կ'ապահովէ տարեկան անդամավճարներու գանձումը և Կեդրոնական վարչութեան կը վճարէ Մասնաճիւղին տարետուրքը (ֆոթա):

ե. Կը մատակարարէ իր կալուածները՝ եթէ կան, և կը կատարէ հարկ եղած նորոգութիւնները: Կալուածներու առուծախի, ինչպէս նաև դրամական փոխառութիւններու համար անհրաժեշտ է ունենալ Ընդհանուր Անդամական Ժողովի երկու երրորդին դրական բուէն և այնուհետև վաւերացումը Կեդրոնական վարչութեան:

զ. Կը պահէ անդամակցութեան անուանացանկը՝ հասցէներով միասին, և անկէ պատճէն մը կը դրկէ Կեդրոնական վարչութեան:

է. Հաշուեմանից Յանձնախումբին ֆունկցիոններն ու վաւերացումէն ետք, Ընդհանուր Անդամական Ժողովին կը ներկայացնէ իր տարեկան գործառնութիւններու հաշուեկշիռը առ ի վաւերացում. վաւերացեալ հաշուեկշիռին մէկ պատճէնը կը դրկուի Կեդրոնական վարչութեան:

ը. Կը կազմէ տարեկան նախահաշիւը և զայն կը ներկայացնէ Ընդհանուր Անդամական Ժողովին՝ առ ի վաւերացում:

թ. Կը կատարէ այն բոլոր գործերը որ յատուկ են իր պաշտօնին՝ ներկայ Կանոնագրին համաձայն:

8.- Մասնաճիւղի վարչութեան կամ անոր մէկ անդամին դէմ եղած գանգատներ գրաւոր պէտք է ուղղուին Կեդրոնական վարչութեան՝ առ ի տնօրինութիւն:

9.- Վարչութեան ատենապետին պարտականութիւններուն մաս կը կազմեն՝ վարել վարչական ժողովները և բացառիկ ընդհանուր Անդամական ժողովները. հսկել վարչականներու տարած աշխատանքին՝ ի հարկին վերաբնեւում, սահմանափակելով կամ ընդլայնելով անոնց գործունեութիւնները, ինչպէս նաև կատարել այն բոլոր գործերը որ կը վերաբերին իր պաշտօնին: Ատենապետը ի պաշտօնէ անդամ է Մասնաճիւղի բոլոր յանձնախումբերուն:

10.- Վարչութեան ատենադպիրին պարտականութիւններուն մաս կը կազմեն՝ պահել վարչութեան բոլոր օրինաւոր նիստերուն ատենագրութիւնները. գրել և ուղարկել հարկ եղած նամակները և հրաւերները. պահել անդամացանկը և բոլոր ոչ-հաշուական վաւերաթուղթերն ու Մասնաճիւղին կնիքը, ինչպէս նաև կատարել իր պաշտօնին կապակցութեամբ ատենապետին կողմէ եղած թելադրանքները:

11.- Վարչութեան գանձապահին պարտականութիւններուն մաս կը կազմեն՝ պահել Մասնաճիւղին դրամական գործառնութիւններու հաշուեցոյցներուն և ստացագրերուն բոլոր պաշտօնական վաւերաթուղթերը. պահել ընթացիկ գանձումներու և ծախսերու հաշիւը. կատարել գանձումներն ու վճարումները՝ ըստ վարչութեան որոշումին. հսկել Մասնաճիւղի ելումական կացութեան. պատրաստել տարեկան նիւթական տեղեկագիրը. կատարել իր պաշտօնին կապակցութեամբ ատենապետին կատարած թելադրանքները:

ՅՕԴՈՒԱԾ Է.
ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ

1.- Կեդրոնական վարչութիւնը Պատգամաւորական Ժողովի հրաւերները կ'ուղարկէ բոլոր Մասնաճիւղերուն, ժողովի թուականէն առնուազն երկու ամիս առաջ: Պատգամաւորական Ժողովը կը գումարուի տարին անգամ մը, նախորդ Պատգամաւորական Ժողովին կամ Կեդրոնական վարչութեան որոշած թուականին և վայրին մէջ:

2.- Պատգամաւորները կ'ընտրուին Մասնաճիւղին ընդհանուր Անդամական Ժողովէն: Իւրաքանչիւր տասը իրաւասու անդամի վրայ կ'ընտրուի մէկ պատգամաւոր՝ առաւելագոյն թիւը ըլլալով տասը պատգամաւոր մէկ Մասնաճիւղի համար: Ընդհանուր Անդամական Ժողովը կ'ընտրէ նաև պատգամաւորներու թիւին առնուազն կէս թիւով փոխ-պատգամաւորներ, որոնք կը փոխարինեն Պատգամաւորական Ժողովէն բացակայող պատգամաւորները: Մասնաճիւղի վարչութեան ատենապետը կ'ունենայ պատգամաւորի բոլոր իրաւունքները՝ անկախաբար տուեալ Մասնաճիւղի պատգամաւորներու թիւէն:

3.- Պատգամաւորական Ժողովը կը վարեն Կեդրոնական վարչութեան ատենապետն ու ատենադպիրը (կամ փոխ-ատենապետն ու փոխ-ատենադպիրը):

4.- Միութեան ունէ անդամ կրնայ ներկայ ըլլալ Պատգամաւորական Ժողովին, սակայն բուժարկելու իրաւունք ունին միայն պատգամաւորները:

5.- Կեդրոնական վարչութեան անդամները ունին պատգամաւորի լրիւ իրաւունքները՝ ներառեալ բուժարկելու և ընտրուելու իրաւունքները:

6.- Ժողովին օրինական մեծամասնութիւն գոյացած կ'ըլլայ՝ երբ Մասնաճիւղերու մեծամասնութեան պատգամաւորները անձնապէս ներկայ են:

7.- Բացառիկ Պատգամաւորական Ժողովներ կը գումարուին երբ՝

ա. Կեդրոնական Վարչութիւնը անհրաժեշտ նկատէ.

բ. Մասնաճիւղերու երկու երրորդը գրաւոր դիմում կատարէ Կեդրոնական Վարչութեան:

8.- Պատգամաւորական Ժողովին օրակարգը պատրաստուած կ'ըլլայ Կեդրոնական Վարչութեան կողմէ: Ներկայ պատգամաւորներու մեծամասնութեան որոշումով կարելի է օրակարգին վրայ նիւթեր ւելցնել:

9.- Բոլոր որոշումները, - բացի կանոնագրային բարեփոխման որոշումներէն, - ընտրութիւնները և բանաձեւումներու որդեգրումը կը կատարուին պատգամաւորներու պարզ մեծամասնութեան ֆուէով:

10.- Պատգամաւորական Ժողովին պարտականութիւններուն մաս կը կազմեն՝

ա. Հսկել ներկայ կանոնագրին ճշգրիտ գործադրութեան:

բ. Լուծել օրակարգի հարցերը:

գ. Ընտրել երեք հոգիէ բաղկացեալ Ընտրողական Յանձնախումբ մը, որուն պարտականութիւնն է յաջորդ տարուան Պատգամաւորական Ժողովին ներկայացնել թեկնածուներու երկպատիկ ցանկ մը՝ նկատի առնելով նաև Մասնաճիւղերէ ներկայացուած թեկնածուներու անունները:

դ. Յաջորդ մէկ տարուան համար ընտրել Կեդրոնական Վարչութեան կազմը ամբողջացնող երեք անդամներ: Իրենց պաշտօնավարութիւնը ւաւրտած անդամներ վերընտրելի են:

ե. Ընտրել երեք անձերէ բաղկացեալ Հաշուեֆննիչ Մարմին մը, յաջորդ մէկ տարուան համար: Այս մարմինն պաշտօնն է ֆննել Կեդրոնական Վարչութեան տարեկան հաշիւները և արդիւնքն ու ի հարկին իրենց թելադրութիւնները ներկայացնել յաջորդ Պատգամաւորական Ժողովին:

զ. Սահմանել իւրաքանչիւր Մասնաճիւղի տարետուրքը:

է. Զննել և վաւերացնել Կեդրոնական Վարչութեան անցնող տարուան նիւթական ու բարոյական տեղեկագրութիւնները:

ՅՕԴՈՒԱԾ Ը

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

1.- Թէֆէեան Մշակութային Միութեան Մ. Նահանգներու և Գանատայի Կեդրոնական Վարչութիւնը, ըստ Մեսեչուսէց Նեհանգի օրինական արձանագրութեան տրամադրութիւններուն, կը բաղկանայ տասը մնայուն և երեք ընտրովի անդամներէ: Մնայուն անդամներէն ունէ մէկուն հրաժարման կամ մահուան պարագային, դարձեալ վերոյիշեալ օրինական արձանագրութեան համաձայն, մնացեալ մնայուն անդամները իրենց երկու երրորդին մեծամասնական ձայնով կ'ընտրեն նոր մնայուն անդամ մը:

2.- Ընտրովի անդամներուն պաշտօնավարութեան շրջանը մէկ տարի է. անոնք վերընտրելի են: Ընտրութիւնները կը կատարուին երկպատիկ ցանկէ մը՝ ներկայ պատգամաւորներու առաւելագոյն դրական ֆուէներու դրութեամբ (փը-

լուրալիթի վրոյ): Կեդրոնական Վարչութեան անդամ ընտրուելու համար թեկնածուն պէտք է որ նուազագոյնը երկու տարի անդամակցած ըլլայ Միութեան: Ընտրովի անդամի մը հրաժարման կամ մահուան պարագային, անոր պաշտօնավարութեան ջրջանը կ'ամբողջացնէ յաջորդ անաւելագոյն իրէ ստացած թեկնածուն:

3.- Կեդրոնական Վարչութիւնը մեծամասնութեան ձայնով կ'ընտրէ ատենապետ մը, փոխ-ատենապետ մը, ատենադպիր մը և գանձապահ մը, բոլորն ալ մէկ տարուան համար: Կարելի է ունենալ մէկէ աւելի փոխ-ատենապետ ու ատենադպիր:

4.- Կեդրոնական Վարչութեան նիստը օրինաւոր է՝ երբ անդամներու մեծամասնութիւնը ներկայ է: Կեդրոնական Վարչութիւնը ժողով կը գումարէ առնուազն երեք ամիսը անգամ մը:

5.- Կեդրոնական Վարչութեան իրաւասութիւններուն և պարտաւորութիւններուն մաս կը կազմեն՝

ա. Գործադրել Պատգամաւորական Ժողովին որոշումները:

բ. Պաշտօնի կոչել կամ պաշտօնէ դադարեցնել Կեդրոնական Վարչութեան ծառայող պաշտօնեաներ, ինչպէս՝ քարտուղար, խմբագիր, ջէնֆի մատակարար ևլն., միջոտ մնալով որոշեալ նախահաջիւի սահմանին մէջ:

գ. Հաստատել կամ բեկանել Մասնաճիւղերու ընտրութիւններն ու որոշումները, և զբաղիլ բոլոր այն հարցերով կամ բողոքներով որոնք ուղղուած են Կեդրոնական Վարչութեան՝ Մասնաճիւղերու կամ անդամակցութեան կողմէ:

դ. Տեւական կայ պահել Մասնաճիւղերու հետ՝ տալու և ստանալու գործունէութիւններու մասին տեղեկութիւններ, կատարելու թելադրութիւններ կամ տալու հրահանգներ՝ ըստ այս Կանոնագրի տրամադրութիւններուն:

ե. Մատակարարել Միութեան բոլոր կալուածները և ինչքերը՝ պահելով ցանկ մը Մ. Նահանգներու և Գանատայի միութենապատկան ստացուածքներու: Որոշումներ տալ, հաստատել կամ բեկանել Մասնաճիւղի մը Ընդհանուր Անդամական Ժողովէն բխած որոշումները՝ կալուածային առումով, շինութեան կամ վարձակալութեան մասին:

զ. Հաստատել նոր Մասնաճիւղեր:

է. Իր տարեկան նիւթական հաշուեկշիռն ու գործունէութեան տեղեկագրութիւնը ներկայացնել Պատգամաւորական Ժողովին:

ը. Մասնաւոր հարցերու ուսումնասիրութեան կամ մասնաւոր ծրագրերու հետապնդումին համար նըշանակել յատուկ յանձնախումբեր և հսկել անոնց գործունէութեան վրայ:

թ. Պատրաստել Պատգամաւորական Ժողովին օրակարգը:

6.- Կեդրոնական Վարչութեան ունէ անդամ որ իր վարժով կը նսեմացնէ իր պաշտօնը՝ Վարչութեան անդամներու երկու երրորդին իրէնով կը կախակալուի իր պաշտօնէն: Եթէ պարագան ընտրովի անդամի մը կը վերաբերի՝ հարցը կը ներկայացուի Պատգամաւորական Ժողովին, որուն որոշումը վերջնական է: Մինչ այդ, սառեցուած կը պահուի գործունէութիւնը այդ անդամին:

ՅՕԴՈՒԱԾ Թ.
ԼՈՒԾԱՐԸ

1.- Մ. Նահանգներու և Գանատայի Թէֆէեան Մշակութային Միութեան լուծարքի պարագային՝ անոր պատկանող բոլոր ջարժուն և անջարժ ինչքերը, ըստ Մեսեչուսէց Նահանգի օրինական արձանագրութեան տրամադրութիւններուն, կը յատկացուին Կեդրոնական Վարչութեան որոշած հայկական կազմակերպութեան կամ կազմակերպութիւններուն, որոնց նպատակները յար և նման են Թէֆէեան Մշակութային Միութեան նպատակներուն:

2.- Մասնաճիւղի մը լուծարքի պարագային, անոր պատկանող բոլոր ջարժուն և անջարժ ինչքերը կը փոխանցուին Կեդրոնական Վարչութեան, ի բացառեալ այն պարագայէն՝ երբ Մասնաճիւղը ունի առանձին օրինական արձանագրութիւն, ուր այլապէս տնօրինուած է այս հարցը: Նման պարագայի՝ առնուելիք ֆայլը կը կատարուի Կեդրոնական Վարչութեան գիտակցութեամբ ու հաւանութեամբ:

ՅՕԴՈՒԱԾ Ժ.
ԿԱՆՈՆԱԳՐԻ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ

1.- Սոյն Կանոնագրի յօդուածները կարելի է փոփոխել միայն երբ առաջարկուած բարեփոխութիւնը կը վաւերացուի տարեկան Պատգամաւորական Ժողովին երկու երրորդին մեծամասնութեան ֆուէով, պայմանաւ որ բարեփոխումը չհակասէ օրինական արձանագրութեան տրամադրութիւններուն:

2.- Կանոնագրի բարեփոխումի առաջարկները Մասնաճիւղի վարչութիւն մը կը ներկայացնէ Կեդրոնական Վարչութեան, որ իր հերթին զայն կը ներկայացնէ Պատգամաւորական Ժողովին: Կարելի է նաև որ պատգամաւոր

մը ուղղակի Պատգամաւորական Ժողովին ներկայացնէ առաջարկը, որ ի զօրու կը դառնայ երկրորդուելէ ետք:

ՅՕԴՈՒԱԾ ԺԱ.
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

1.- Մ. Նահանգներու և Գանատայի սահմաններուն մէջ "Թէֆէեան ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ" անունը կրող, գոյութիւն ունեցող կամ յառաջիկային կազմուելիք որևէ կազմակերպութիւն ենթակայ է ներկայ Կանոնագրի բոլոր տրամադրութիւններուն:

2.- Եթէ օրինական արձանագրութեամբ գոյութիւն ունեցող կանոնագրերու և այս Կանոնագրին տրամադրութիւնները չհամապատասխանեն իրարու՝ առաջինները կը մնան գերակշիռ:

3.- Երբ Մասնաճիւղ մը նպատակայարմար գտնէ արձանագրուելու ըստ Նահանգային կամ Պետական Օրէնքներու՝ իբրև անձնաւորեալ կազմակերպութիւն (ինֆորմորէյթըտ), այդ արձանագրութեան վաւերացումը օրինական ձևակերպումի ենթարկուելէ առաջ պէտք է վաւերացուի Կեդրոնական Վարչութեան կողմէ գրաւոր որոշումով:

4.- Ներկայ Կանոնագրին տրամադրութիւններուն հեղինակաւոր մեկնաբանութիւնը վերապահուած է Կեդրոնական Վարչութեան: